ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Ն. Զիրոյան

<< 01 սեպտեմբեր 2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

<<ՀՀ Արարատի մարզի Դարբնիկի Ժորա Եսայանի անվան

միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

IV դասարան

Դասղեկ՝ Մերի Ավետիսյան

<<2022-2023>> ուսումնական տարի

ԿՐԹԱ - ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանը բաղկացած է 14 հոգուց՝ 12 տղա, 2 աղջիկ: Դասարանում կա գերազանց սովորող 2 աշակերտ: Աշակերտները համախմբված են, ծանոթ են դպրոցական կյանքին, կարգ ու կանոնին: Ճանաչում են իրենց իրավունքները և պարտականությունները: Երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և առանց անհիմն բացակայությունների: Ակտիվ մասնակցում են դպրոցում կազմակերպվող միջոցառումներին:

2. Ուսումնա - դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

Ուսումնա - դաստիարակչական նպատակով վարել զրույցներ աշակերտների առաջադիմության, կարգապահության և վարքի վերաբերյալ: Ձևավորել ճիշտ վերաբերմունք շրջապատող մարդկանց նկատմամբ: Կազմակերպել արտադասարանական միջոցառումներ, էքսկուրսիաներ, որոնք կնպաստեն աշակերտների մոտ բազմաբնույթ կարողությունների ձևավորմանը: Աշակերտների մոտ ձևավորել կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենա, փոխօգնություն: Կազմակերպել ծնողական ժողովներ, պահել ծնող-ուսուցիչ կապը:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

<u>3.1 Հոգևոր դաստիարակություն</u>

Կարևորել լեզվի դերը ազգի պահպանման գործում: Շարունակել նպաստել աշակերտների առողջ և հավասարակշռված հոգեկան աշխարհի ձևավորմանը: Երեխաների մեջ զարգացնել սեր, հավատ առաքելական եկեղեցու նկատմամբ:Ծանոթացնել նրանց հայ առաքելական եկեղեցուն և եկեղեցական տոներին: Կազմակերպել երեխաների մշակույթի-հոգեբանական առանձնահատկությունների բազմակողմանի հետազոտումը՝ հաշվի առնելով նրանց հետաքրքրությունները:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների մոտ հարգանքի և սիրո զգացում արթնացնել գեղեցիկի նկատմամբ, զարգացնել գեղագիտական ճաշակը: Սովորեցնել, զգալ, տեսնել, գնահատել գեղեցիկը: Անցկացնել զրույցներ համապատասխան թեմաներով:Արվեստի միջոցով իրականացնել գեղագիտական դաստիարակությունը:Աշակերտներին ներգրավել դպրոցում կազմակերպվող մանկական ստեղծագործությունների ցուցահանդեսներին:

3.3 Ռազմա - հայրենասիրական դաստիարակություն

Ռազմա-հայրենասիրական դաստիարակությունը կազմակերպել տարբեր զրույցների, հանդիպումների միջոցով, որտեղ կգովերգվի հայրենասիրությունը, ազնվությունը, կամային որակները և այլն: Հաղորդակից դարձնել իրենց երկրի պատմական անցյալի դժվարություններին, ձեռքբերումներին: Ծանոթացել Հայաստանի ազգային հերոսների հետ, զրուցել նրանց կատարած սխրանքների մասին:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Աշակերտների առողջության ամրապբդման համար շատ կարևոր նշանակություն ունի ֆիզիկական դաստիարակությունը: Համապատասխան խաղերի և սպորտային միջոցառումների շնորհիվ նպաստել առողջության ամրապնդմանը, սեր դեպի սպորտը: Անցկացնել զրույցներ ՝ «Առողջ մարմնում առողջ հոգի», «Մեր մարզիկները» թեմաներով:

3.5 Աշխատանքային դաստիարակություն :

Աշակերտների մոտ ձևավորել աշխատանքային կուլտուրա, սովորեցնել հարգել աշխատավոր մարդու աշխատանքը: Նրանց մոտ զարգացնել համատեղ աշխատանքի հմտությունը: Կազմակերպել հանրօգուտ աշխատանք դպրոցի բակում: Զրույցների և օրինակների միջոցով զարգացնել նրանց աշխատասիրության որակը

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Շարունակել աշակերտներին սովորեցնել սիրել և պահպանել բնությունը , լինել ուշադիր շրջակա միջավայրի նկատմամբ: Հոգատարության զգացում սերմանել

աշակերտների մոտ շրջապատի և բնության հանդեպ: Կազմակերպել հանրօգուտ միջոցառումներ;Խնամք այգու, կենդանիների, ծաղիկների նկատմամբ:

4. Դպրոց - ընտանիք կապը

Ուսումնական տարվա սկզբից պետք է ստեղծել ազատ հաղորդակցման ուղիներ: Մշտական կապ պահպանել ծնողների հետ, նրանց մասնակից դարձնել ուսումնադաստիարակչական աշխատանքներին: Կազմակերպել անհատական զրույցներ ծնողների հետ:

ՈՒՍՈՒՄՆԱ - ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	*Ուսումնա -դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը*	*Կատարման ժամկետը*	*Կատարողներ*
I	Դպրոցական կարգուկանոնի ներկայացում,դասարանական կանոնների մշակում,դասվար-աշակերտ կապի ամրապնդում	02.09.2022 թ.	դասղեկ աշակերտ
II	«Քանի լեզու գիտես այնքան մարդ ես» թեմայով զրույց: Զևավորել բազմակարծություն և աշխարհահայացք	09.09.2022 թ.	դասղեկ աշակերտ
III	«Եթե ես լինեի …» թեմայով քննարկում: Նապատակն է վեր հանել կարողությունները և հմտություննե	16.09.2022 թ.	դասղեկ աշակերտ
IV	«Կարողությունների հստակեցում » թերթիկի միջոցով հստակեցնել թե ինչ	23.09.2022 թ.	դասղեկ աշակերտ

	կարողություններն են ավելի զարգացած		
V	«Ես էլ քեզ նման եմ » թեմայով զրույցը հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ:	30.09.2022 թ.	դասղեկ աշակերտ
VI	«Բնական պաշարներ » թեմայով քննարկումը կձևավորի գիտելիքներ արդյունաբերության տարբեր ոլորտների վերաբերյալ:	07.10.2022 թ.	դասղեկ աշակերտ
VII	«Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում » նպատակն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները:	14.10.2022 թ.	դասղեկ աշակերտ
VIII	«Պետական խորհրդանիշներ» թեմայով զրույց:Նպատակն է աշակերտներին ներկայացնել ծագման և ձևավորման ուղին	21.10.2022 թ.	դասղեկ աշակերտ
IX	«Էկոլոգիական հիմնախնդիրներ »: Աշակերտներին հանձնարարել հավաքել տեղեկություններ Հայաստանի Հանրապետության ավելի ուշագրավ էկոլոգիական խնդիրների մասին:	04.11.2022 թ.	դասղեկ աշակերտ
X	«Պոլիեթիլենի տոպրակներն ու շրջակա միջ ավայրը» ասոցացնել հին և նոր դասը տալ խ նդրին նոր լուծումներ:	11.11.2022 թ.	դասղեկ աշակերտ
XI	«Գնահատիր ինքդ քեզ » նպատակն է արժ ևորել արժե համակարգ ինչպես նաև կարող անալ կատարել ինքնավերլուծություն:	17.11.2022 թ.	դասղեկ աշակերտ
XII	«Գնահատվող մրցույթ »թեման հնարավոր ություն կընձեռի ճանաչել իրենց շրջապատող անձանց և շտկել թյուր կարծիքները:	25.11.2022 թ.	դասղեկ աշակերտ
XIII	« Բնական աղետներ » ներկայացնել բնակա ն աղետների առաջացման պատճառները և դ րանց հետևանքները:	02.12.2022 թ.	դասղեկ աշակերտ

XIV	«Կարող եմ օգտակար լինել » թեման հնարավորություն կտա աշակերտների մոտ ձևավորել բարին և դրական հատկանիշները:	09.12.2022 թ.	դասղեկ աշակերտ
XV	<< Ազգ և պետություն >> թեմայով բաց քննար կում և վերլուծություն:	16.12.2022 թ.	դասղեկ աշակերտ
XVI	<< Փոքրիկ պատմություններ անհատի և հաս արակության խնդիրների մասին >> նպատակն է աշակերտներին տեղեկացնել թե մարդկությունը ինչ ժամանակաշրջան է անցել:	23.12.2022 թ.	դասղեկ աշակերտ
XVII	<< Ազգային և միջազգային տոներ>> նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները և ազդեցությունները:	13.01.2023 թ.	դասղեկ աշակերտ
XVIII	<< Եկեղեցին և ազգը >> քննարկման միջոցով աշակերտների մոտ կհիմնավորեք եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում:	20.01.2023 թ.	դասղեկ աշակերտ
XIX	<< Լրատվամիջոցներ և կերպարներ >> թեմայի միջոցով լուսաբանել արդի ժամանակաշրջանում լրատվամիջոցների դերը:	27.01.2023 թ.	դասղեկ աշակերտ
XX	<< Բարեկամներ և թշնամիներ >> քննարկման միջոցով կներկայացվի հայ-ադրբեջանական խնդրի ծագման պատճառները:	03.02.2023 թ.	դասղեկ աշակերտ
XXI	<< Ինչպես վարվել աղբի հետ >> օգնել սովորողներին գիտակցելու աղբի և թափոնների վնասակար ազդեցությանը բնության և մարդու առողջության վրա:	10.02.2023 թ.	դասղեկ աշակերտ
XXII	<< Սպառողների իրավունքներ >> ներկայացնել և ձևավորել իրենց իրավունքները , որպես սպառողներ:	17.02.2023 թ.	դասղեկ աշակերտ
XXIII	<< Քաղաքացիական ինքնություն >> կիմանան ինչ է քաղաքացիական ինքնությունը կհասկանան թե	24.02.2023 թ.	դասղեկ աշակերտ

	քաղաքացի լինելն ինչքանով է առնչվում իրենց հետ:		
XXIV	<< Ինչու՞ է պետք ներառումը >> աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողական վերաբերմունք հատուկ կարիքավոր մարդկանց նկատմամբ	03.03.2023 թ.	դասղեկ աշակերտ
XXV	<< Ապագայի ծառը >> խթանում է վերլուծելու պատճառահետևանքային կապերը դիտարկելու, դասակարգելու հմտությունները:	10.03.2023 թ.	դասղեկ աշակերտ
XXVI	<< Գնահատվող մրցույթ >> աշակերտները կզարգացնեն և կստուգեն իրենց գիտելիքները կկարողանան խմբում հաջողությունն ապահովելու համար:	17.03.2023 թ.	դասղեկ աշակերտ
XXVII	<< Նախապաշարումների ոստյան >> ներկայացնել թե ինչպես է զգում նախապաշարմունքի և կարծրատիպերի զոհ դարձած մարդը: Իրավիճակը հաղթահարելու ուղիներ որոնել:	24.03.2023 թ.	դասղեկ աշակերտ
XXVIII	<< Պատասխանատու քաղաքացի >> աշակերտները այս թեմայի ուսումնասիրելուց հետո կիմանան թե ինչպես պետք է լինի ցանկացած քաղաքացի:	07.04.2023 թ.	դասղեկ աշակերտ
XXIX	<< Պետք է խնայել >> խթանելով աշակերտների ստեղծագործական մտածողությունը ձևավորել բնության և բնական պաշարների հանդեպ խնայող վերաբերմունք	14.04.2023 թ.	դասղեկ աշակերտ
XXX	<< Հայոց Մեծ եղեռն >> աշակերտներին ներկայացնել հայոց պատմական տխուր դեպքերին :Խոսել Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի մասին: Նրանց մոտ սերմանել հայրենասիրություն:	21.04.2023 թ.	դասղեկ աշակերտ
XXXI	<< Ասացվածքի ամբիոն >> աշակերտներին ծանոթացնել ժողովրդական բանահյուսության մի	28.04.2023 թ.	դասղեկ աշակերտ

	տեսակին՝ ասավածքին և նրանց մեջ զարգացնել բարոյական արժեքներ մարդկանց նկատմամբ հարգանք մարդասիրություն:		
XXXII	<> ներկայացնել հայերի մասնակցությունը մի շարք մարտական գործողություններին: Նպատակն է աշակերտների մոտ ձևավորել ազգային գիտակցության արժեհամակարգ:	05.05.2023 թ.	դասղեկ աշակերտ
XXXIII	« Ի՞նչ մասնագիտություններ կան» սովորողները կհասկանան՝ թեև տարբեր մասնագիտություններ պահանջում են տարբեր կարողություններ և որակներ/ուսուցիչ,զինվորական/ , այնուամենայնիվ կան որակներ և կարողություններ , որ կարևոր են բոլոր մասնագիտությունները:	12.05.2023 թ.	դասղեկ աշակերտ
XXXIV	<< Ուսումնական տարին ավարտում ենք ձեռքբերումներով >> խորագրով թեմայի շուրջ զրույցներ,ուրախանալ միմյանց ձեռբերումներով,ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեվերջյան ամփոփում	19.05.2023 թ.	դասղեկ աշակերտ

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օրը	**Դասղեկի անցկացրած միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը**	**ծանոթություն**
20.09.2022թ.	Զրույց. «Անկախության ուղին» թեմայով:	
05.10.2022թ.	Զրույց. «ՈՒսուցչի տոն» , «Թարգմանչաց տոն» թեմաներով:	
24.10-29.10թ.	Այց Խոր Վիրապ եկեղեցի	

07.12.2022թ.	Զրույց. «Ինչ է երկրաշարժը: Ինչպես պաշտպանվել երկրաշարժի ժամանակ»:	
21.12.2022թ.	Զրույց. «Ամանորի և Սուրբ Ծննդյան հեքիաթը»:	
27.01.2023թ.	Զրույց. « Բանակը երկրի կայունության երաշխավորն է» թեմայով	
8.02.2023թ.	Զրույց. « Տիարնընդառաջ տոնի խորհուրդը» թեմայով:	
07.03.2023թ.	Զրույց գեղեցկության և բարոյականության վերաբերյալ	
05.04.2023թ.	Զրույց. « Սուրբ Զատիկ տոնի խորհուրդը, ավանդույթները» թեմայով	
21.04.2023թ.	Զրույց. « Մեծ եղեռն ու դրա հետևանքները» թեմայով:	
09.05.2023թ.	Զրույց. « Մայիսյան հաղթանակներ» թեմայով:	
12.06-17.06.2023թ.	Էքսկուրսիա	